տեղեկութիւններ, լսւում էին զանազան սարսափելի համբաւներ, որոնց ես երբեք չէի հաւատում: Իսկ այժմ ի՞նչ բախտ էր, որ մեզ կրկին հանդիպեցրեց միմեանց տասն եւ երկու տարոայ անջատումից յետո...

Երկու միւս անծանօթները, որոնք խարոյկի մօտ խորոված էին պատրաստում, ամենեւին չշարժոեցան իրանց տեղից, միայն երբեմն կասկածաւոր աչքերով նայում էին ինձ վրայ: Եւ Կարօն չասեց, թէ նրանք ովքեր են:

— Երեւի, ուղիղ դպրոցի՞ց այստեղ, — հարցրեց Ասլանը ժպտալով:

Մինչեւ իմ պատասխանը, Սագօն մէջ մտաւ.

— Չե՞ս տեսնում, Ասլան, չե՞ս տեսնում, որ բոլորովին քացախել է այբուբենի մէջ: — Խե՜ղճ տղայ, հէնց որ նայում ես երեսին, այնտեղ կարդում ես այբ-ժէ, ճե-ռայ, խա՜... խա՜... խա՜... Այսպէս չէ՞, Ֆարհատ: Ա՜խ, ինչպէս ազատոեցայ ես... տասն եւ երկու տարի է, ինչ-որ մեր թոնրում այրեցին այն անիծած գիրքը... թո՞ղ սատանային փայ լինի... խա՜... խա՜... խա՜...

Սագօյի կծու եւ դառն կատակները ամենեւին չվիրաւորեցին ինձ, միայն յիշեցրին մեր աննախանձելի դպրոցական կեանքը, երբ այբ-ժե-ճե-ռան մեր հոգին հանում էր, այնքան արտասուքի եւ տանջանքի պատճառ էր դառնում մեզ...

Այդ միջոցին լսելի եղաւ Կարօյի ձայնը.

— Տղե՜րք, ով քաղցած է, թող մօտ գայ:

Շատախօս Սագօն վազեց դէպի ընթրիքի սեղանը. ես եւ Ասլանը մնացինք մենակ:

— Ինչպէ՞ս է «նա»... — հարցրեց Ասլանը դողդոջուն ձայնով:

Իսկոյն հասկացայ, որ Սոնայի մասին էր հարցնում:

— Այնպէս, որպէս էր առաջ. ժպտում է, կարմրում է հետը, խօսելիս... փախչում է, երբ ուզում ես գրկել... լաց է լինում, երբ իր հայրը սիրած աշակերտին ծեծում է... Ամէնը էլի այնպէս է, որպէս տեսել ես: Գլխաւոր փոփոխութիւնը, որ եղել է քո ժամանակից յետոյ, այն է, որ հիմա աւելի գեղեցկացել է եւ աւելի հասունացել է...

Ասլանը ոչինչ չպատասխանեց, բայց ես նկատեցի, որ նրա մթին դէմքը աւելի մռայլոեցաւ:

— Գնանք մի բան ուտենք, դու երեւի քաղցած ես, — ասաց նա ոռպէական խռովութիւնից յետոյ:

Խարոյկից ոչ այնքան հեռու պատրաստոած էր ընթրիքի սեղանը. ի՜նչ սեղան. մերկ գետնի վրայ տարածել էին սփռոցի փոխարէն մի փալասի